Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան 14 մայիսի 2025թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի հավելվածի 17-րդ կետը, կայացել է՝ Կառավարման խորհրդի հերթական նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տաթևիկ Սարգսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տարոն Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիվդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ
Բացակայում է՝	
Դավիթ Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Մասնակցում են նաև՝	

Հովհաննես Մարտիրոսյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար
Ասատուր Վարդանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Սերգո Աթանեսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
Վահագն Բարսեղյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին հավանություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Լևոն Լևոնյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերին՝ ներառելով նաև հետագայում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ներկայացվող առաջարկությունների հիման վրա լրամշակումները՝ համաձայն հավելվածների:

Կողմ 7, Դեմ 0

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Լևոն Լևոնյանի թեկնածությանը:

Կողմ 7, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը օրակարգում ներառված առաջին հարցի վերաբերյալ հայտնեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Լիազոր պետական մարմնին տարածական տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 730-Լ որոշման 1-ին կետով սահմանվել է, որ պետական կառավարման մարմինները պետական տարածական տվյալների (քարտեզագրագեոդեզիական) ֆոնդի արդիականությունն ապահովելու նպատակով լիազոր պետական մարմնին՝ Կադաստրի կոմիտեին տրամադրում են նոր առաջացած բազային տարածական տվյալները: Ղեկավարվելով վերոնշյալ որոշմամբ՝ Տեսչական մարմինը 2022 թվականից վերահսկողություն իրականացման ընթացքում սկսել է օգտագործել թվային տեխնոլոգիաներ՝ կիրառելով լիդար և օրթո համակարգեր, ուստի տվյալ գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել կառուցվածքային փոփոխություն՝ Ընդերքի վերահսկողության վարչությունում ավելացնել 3-րդ բաժինը, որը կզբաղվի տարածական չափագրումներով և դրանց վերլուծական աշխատանքներով:

Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց նաև Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչությունում 11 գլխավոր իրավաբանի հաստիք ավելացնելու վերաբերյալ հարցը՝ նշելով, որ դա պայմանավորված է դատական գործերի քանակի կտրուկ ավելացմամբ: Նախատեսվում է, որ գլխավոր իրավաբանների հաստիքները մրցութային կարգով համալրվելու են Տարածքային ստորաբաժանումների ավագ իրավախորհրդատուների կողմից և համալրման գործընթացի լիարժեք ավարտից հետո ավագ իրավախորհրդատուների թափուր պաշտոնները կրճատվելու են վերականգնելով այս պահին կրճատվող թափուր հաստիքները:

Կառավարման խորհրդի անդամներ Տաթևիկ Սարգսյանի և Բարդուխ Գաբրիելյանի կողմից բարձրաձվեց բյուջեյի հավելյալ ավելացման վերաբերյալ հարցը, ինչին ի պատասխան Տեսչական մարմնի ղեկավարը հայտնեց, որ փոփոխությունը համակարգային է և միտված չէ բյուջետային բեռի ավելացմանը, ընթացիկ տարվա բյուջեում փոփոխություն չի նախատեսվում:

Օրակարգային երկրորդ հարցի շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Լևոն Լևոնյանի կենսագրական տվյալները՝ նշելով, որ թեկնածուն պետական կառավարման համակարգում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, տիրապետում է ոլորտի առանցքային խնդիրներին և իրեն վերապահված լիազորությունները կատարել է պատշաճ, ինչը նաև հավաստեցին Կառավարման խորհրդի անդամներ Տաթևիկ Սարգսյանը և Շահեն Խաչատրյանը:

Կառավարման խորհրդի նախագահի կողմից վերահաստատվեցին թեկնածուի վերաբերյալ հնչեցված կարծիքները առ այն, որ Լևոն Լևոնյանը Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում կարող է լուծել իր առջև դրված խնդիրները:

Օրակարգային հարցերից դուրս ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի կողմից Տեսչական մարմնի ղեկավարին հանձնվեց «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի վերաբերյալ ստացված ահազանգի հիման վրա կազմված փաթեթը՝ գործընթացը ուսումնասիրելու և Խորհրդին հետագա պարզաբանումներ ներկայացնելու նպատակով: Հովհաննես Մարտիրոսյանը վերոնշյալ հարցի վերաբերյալ հայտնեց, որ ներկայացված տեղեկատվությունը կուսումնասիրվի Տեսչական մարմնում՝ ծառողական քննության շրջանակներում, որի ավարտից հետո Խորհրդին կներկայացվի ստացված արդյունքներն ու պարզաբանումները:

Քվեարկությամբ որոշումն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ
(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան